ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ Գ Բ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԱՐԱՄԵԱՆ ՈՐ Ի ԿՈՏԱՅՔ

Սիրելի Սրբազան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ սպասաւորիդ:

Շուրջ քառորդ դար առաջ հոգեւոր ճեմարանի նուիրական յարկից ներս ամբողջացնելով Ձեր հոգեւոր ուսումնառութիւնը՝ Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ծառայանուիրումի ուխտով ստանձնեցիք կուսակրօն քահանայի սրբազան առաքելութիւնը:

Դուք պատասխանատու սպասաւորութեան կոչուեցիք Սիւնեաց եւ Արարատեան Հայրապետական թեմերում, օրինակելի նուիրումով վարեցիք Սեւանի Վազգէնեան դպրանոցի տեսչի պատասխանատու պաշտօնը՝ Ձեր բոլոր յանձնառութիւնների մէջ դրսեւորելով ծառայասէր ոգի, ազնիւ կամք ու անսակարկ նախանձախնդրութիւն:

Ձեր գործունէութիւնը առաւել արդիւնաւոր եղաւ Կոտայքի թեմում: Որպէս Առաջնորդ՝ Դուք ամենայն ջանք ու եռանդ ներդրեցիք Ձեր հոգեւոր խնամքին յանձնուած հայորդեաց հոգեւոր սնունդ ջամբելու սուրբ առաքելութեանը՝ բարի արդիւնքներ արձանագրելով ի նպաստ նորակազմ թեմի շինութեան ու պայծառութեան:

Սիրելի Սրբազան, բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

անդաստանում փարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծառայութիւնը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ

Ի խորոց սրտի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած Ամենախնամ Իր Սուրբ Աջով պահի ու պահպանի Ձեզ, զօրակից լինի բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ շնորհելով քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 14-ն Մայիսի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 722